ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2021թ. օգոստոսի 30-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի 2021-2022 ուս.տարվա անդրանիկ նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը:

ՕԳՈՍՏՈՍ - 1. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի հաստատում:

2. 2021-2022 ուս.տարվա ծավալի և ծանրաբեռնվածության հաստատում:

3. Առկա բակալավրիատի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստում:

4. 2021-2022 ուս.տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը ներկայացրեց ամբիոնի տարեկան աշխատանքային պլանը:

ՕԳՈՍՏՈՍ - 1. Ամբիոնի տարեկան աշխատանքային պլանի հաստատում:

2. 2021-2022ուս.տարվա ծավալի և ծանրաբեռնվածության հաստատում:

3. Առկա բակալավրիատի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստում:

4 . 2021-2022 ուս.տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

5. Ընթացիկ հարցեր:

ՍԵՊՏԵՄԲԵՐ – 1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:

2. Մագիստրոսական ատենախոսութունների թեմաների և նրանց ղեկավարների հաստատում:

3. Ընթացիկ հարցեր:

ՀՈԿՏԵՄԲԵՐ - 1. Առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մասնագիտական/:

2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:

3. Ընթացիկ հարցեր:

ՆՈՅԵՄԲԵՐ – 1. Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվություն:

2. 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվություն:

3 . Ընթացիկ հարցեր:

ԴԵԿՏԵՄԲԵՐ - 1. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստում:

2. Հեռակա ուսուցման ուսումնական գործունեության նախապատրաստում:

3. Ընթացիկ հարցեր

ՀՈՒՆՎԱՐ – 1. Ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում:

2. Առկա 3-րդ կուրսի մանկավարժական և առկա 2-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկաների նախապատրաստում:

3. Հեռակա ուսուցման մանկավարժական պրակտիկաների նախապատրաստում:

4. Ընթացիկ հարցեր

ՓԵՏՐՎԱՐ - 1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:

2. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:

3. Հեռակա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մեթոդիկա/:

4. Ընթացիկ հարցեր:

ՄԱՐՏ - 1. Առկա բակալավրիատի 3-րդ կուրսի և հառակա 4-րդ, 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվություն:

2. 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի հաշվետվություն:

3. Մագիստրատուրայի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստում:

4. Ընթացիկ հարցեր:

ԱՊՐԻԼ - 1. Մագիստրոսական ատենախոսությունների նախնական պաշտպանություն:

2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:

3. Ընթացիկ հարցեր:

ՄԱՅԻՍ - 1. Ամառային քննաշրջանի նախապատրաստում:

2. Առկա ուսուցման համակարգի /բակալավր/ ամփոփիչ ատեստավորման, մագիստրատուրա /մագիստրոսական ատենախոսությունների

պաշտպանության/ արդյունքների ամփոփում:

3. Ընթացիկ հարցեր:

ՀՈՒՆԻՍ - 1. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:

2. Առկա ուսուցման համակարգի ամառային քննաշրջանի արդյունքների ամփոփում:

3. Առարկաների ուսումնամեթոդական փաթեթների վերանայում:

4. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:

5. Ընթացիկ հարցեր:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել Երաժշտության մանկավարժության ամբիոնի 2021-2022 ուս. տարվա տարեկան աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ - 2021-2022 ուս. տարվա ծավալ-ծանրաբեռնվածության հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը նշեց, որ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի <<Երաժշտության մանկավարժության>> ամբիոնի 2021-2022 ուստարում ուսումնական աշխատանքների ծավալը կազմել է 27951ժամ:

Այլ ամբիոններին փոխանցված ժամաքանակ – 1434 ժամ

Ժամավճար – 376 ժամ:

Թափուր է մնացել 3065 ժամ:

Արդյունքում գոյացած 23076 ժամը բաշխվել է ամբիոնի ներքոհիշյալ դասախոսների միջև հետևյալ կերպ.

1.Էլբակյան Սարգիս Էդուարդի – մ.գ.թ., պրոֆ.պ, ամբիոնի վարիչ 1.0 դր. /720ժ/

2. Հարությունյան Աննա Պետրոսի - ա.գ.թ., դոցենտ 1.00դր. /825ժ/

3. Բաղդասարյան Մարգարիտա Էդուարդի – դոցենտ 1.00 դր. /828ժ/

4.Մելիքսեթյան Գոհար Բեժանի – մ.գ.թ., դոցենտ 1.00 դր. /830ժ/

5.Եդիգարյան Վյաչեսլավ Արշավիրի - ա.գ.թ., դոցենտ 1.0 դր. /795ժ/

6. Ադամյան Աննա Ժորիկի – ա.գ.թ.,դոցենտ 1.00 դր. /800ժ/

7.Մադոյան Նաիրա Հրանտի – դասախոս 1.00 դր. /900ժ/

8. Ալավերդյան Տիգրան Գարիկի – պրոֆեսոր 1.00 դր. /711ժ/

9. Խաչատրյան Լիլիկ Գուրգենի – դոցենտ 0.5 դր. /402ժ/

10. Պողոսյան Նունե Էդիկի – պրոֆեսոր 0.25 դր. /189ժ/

11. Թադևոսյան Շաքե Սուրենի – դոցենտ 1.00 դր. /800ժ/

12. Ավետիսյան Ֆլորա Յուրիկի – ասիստենտ 1.00 դր. /890ժ/

13. Դադոյան Ելենա Թելմանի – դասախոս 0.75 դր. /689ժ/

14. Կոստանյան Արուսյակ Համազասպի – դասախոս 0.5 դր. /465ժ/

15. Շահսուվարյան Սուրեն Սուրենի – դոցենտ 0.5 դր. /393ժ/

16. Կարապետյան Մերի Համլետի - դասախոս 0.75դր. /686ժ /

17. . Բաբուրյան Արտաշես Ռոբերտի - դոցենտ 1.00 դր. /801ժ/

18 Յուզբաշյան Յուրիկ Վաղարշակի - մ.գ. դոկտոր, պրոֆեսոր 1.00 դր. /716ժ/

19. Դանիելյան Էդուարդ Մուշեղի – պրոֆեսոր 0.5 դր. /361ժ/

20. Գասպարյան Անահիտ Սաշայի - դոցենտ 1.00 դր. /837ժ/

21. Պետրոսյան Սուսաննա Էդվարդի - ասիստենտ 1.00 դր. /905ժ/

22. Հակոբովա Ռիմմա Սերգեյի - դոցենտ 0.75 դր. /574ժ/

23. Մաթևոսյան Շուշանիկ Ռուդոլֆի - ասիստենտ 1.00 դր. /903ժ/

24. Սիմոնյան Մարիա Արամի - ասիստենտ 0.75 դր. /678ժ/

25. Մարգարյան Նաիրա Արթուրի - ասիստենտ 1.00 դր. /902ժ/

26. Ավետիսյան Մարիաննա Ռոլանդի - դասախոս 1.00 դր. /904ժ/

27. Օջախյան Արմինե Օնիկի - ասիստենտ 1.00 դր. /902ժ/

28. Խաչատրյան Արաքսյա Արտավազդի - դասախոս 1.00 դր. /901ժ/

29. Սայադյան Զարուհի Խաչիկի - դասախոս 0.75 դր. /676ժ/

30. Սիմոնյան Աննա Աշոտի – դասախոս 0.75 դր. /711ժ/

31. Հակոբյան Արմինե Աշոտի – ա.գ.թ., դասախոս 1.00 դր. /932ժ/

32. Խաչիկյան Քրիստինե Սերգեյի – դասախոս 0.5 դր. /450ժ/

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2021-2022 ուստարվա ծավալ-ծանրաբեռնվածությունը:

ԼՍԵՑԻՆ – Առկա 3-րդ և 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, պրակտիկայի ղեկավար Շուշանիկ Մաթևոսյանը ներկայացրեց, որ գեղարվեստական կրթության ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի 2021-2022 ուստարվա երաժշտական կրթություն մասնագիտության 3-րդ կուրսի 1-ին կիսամյակի մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 2021 թ. սեպտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 21-ը /շաբաթական 1-օր/ Շահումյանի անվ. թիվ 1 և Վազգեն Ա-ի անվ. թիվ 168 հիմնական դպրոցներում, մեթոդիստ-ղեկավարներ՝ Սուսաննա Պետրոսյան և Արաքսյա Խաչատրյան:

Առկա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի 2021-2022 ուստարվա երաժշտական կրթություն մասնագիտության 4-րդ կուրսի 1-ին կիսամյակի մանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 2021 թ. սեպտեմբերի 13-ից մինչև հոկտեմբերի 22-ը՝ ՀՊՄՀ թիվ 57 և «Վարդանանց ասպետներ» թիվ 106 հիմնական դպրոցներում: Մեթոդիստ-ղեկավարներ՝ ԵլենաԴադոյան, Նաիրա Մարգարյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առկա 3-րդ և 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ - 2021-2022 ուս.տարվա առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսներ՝ Գոհար Մելիքսեթյանը, Աննա Հարությունյանը, Վյաչեսլավ Եդիգարյանը, Շուշանիկ Մաթևոսյանը, Զարուհի Սայադյանը, Մերի Կարապետյանը ներկայացրեցին վերանայված 2021-2022 ուս.տարվա առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2021-2022 ուս.տարվա առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

ԼՍԵՑԻՆ - Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ՝ Ս.Էլբակյանը առաջադրեց դասախոս՝ Արաքսյա Արտավազդի Խաչատրյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ՝ Ս.Էլբակյանը, ա.գ.թ., դոցենտ՝ Ա.Հարությունյանը, մ.գ.թ., դոցենտ՝ Գ.Մելիքսեթյանը, դոցենտ՝ Ռ.Հակոբովան, պրոֆեսոր՝ Նունե Բադալյանը: Նրանք նշեցին, որ Արաքսյա Խաչատրյանն ունի երկար տարիների աշխատանքային փորձ, մեծ հեղինակություն է վայելում ուսանողների և դասախոսների շրջանում, դրսևորում է բարձր

մասնագիտական պրոֆեսիոնալիզմ, բարեխիղճ և պատասխանատու է իր մանկավարժական գործունեության մեջ: Ունի 5-ից ավելի գիտական հոդվածներ՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, որոնք հրատարակվել են հայկական և արտասահմանյան գիտական ամսագրերում, ժողովածուներում և գիտաժողովների նյութերում: Ունի նաև 1-ուսումնամեթոդական ձեռնարկ «Խմբերգային պարտիտուրի ընթերցում»:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս՝ Արաքսյա Արտավազդի Խաչատրյանի թեկնածությունը՝ դոցենտի գիտական կոչում ստանալու վերաբերյալ դրական կարծիքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ:

Նիստի նախագահ՝ Ս.Էլբակյան

Քարտուղար՝ Ա.Կարապետյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2021թ.-ի սեպտեմբերի 23-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական կազմը:

ՍԵՊՏԵՄԲԵՐ – 1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:

2. Մագիստրոսական ատենախոսութունների թեմաների և նրանց ղեկավարների հաստատում:

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, ա.գ.թ., դոցենտ՝ Աննա Հարությունյանը ներկայացրեց տեսական առարկաների 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի բաց դռների և դասալսումների գրաֆիկը: Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, ասիստենտ՝ Շ.Մաթևոսյանը ներկայացրեց խմբավարություն և ձայնադրում առարկաների բաց դռների և դասալսումների գրաֆիկը, իսկ ա.գ.թ., դոցենտ Վ.Եդիգարյանը՝ նվագարան առարկայի բաց դռների և դասալսումների գրաֆիկը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2021-2022 ուստարվա 1-ին կիսամյակի բաց դռների և դասալսումների գրաֆիկները:

ԼՍԵՑԻՆ – Մագիստրոսական ատենախոսութունների թեմաների և նրանց ղեկավարների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ՝ Ս. Էլբակյանը ներկայացրեց մագիստրոսական ատենախոսությունների թեմաները և ղեկավարներին:

N	Մագիստրոս՝ Ա.Ա.Հ.	Թեմա	Գիտական ղեկավար
1.	Գրիգորյան Շուշաննա Մարզպետի	Երգեցողությունը որպես ռիթմական զգացողության և շարժումային կարողության զարգացման միջոց:	ա.գ.թ., դոցենտ՝ Ա. Հարությունյան
2.	Սիմոնյան Լալա Մանուկի	Սոֆա Ազնաուրյանի՝ երեխաների համար «Չիկարելիի արկածները» օպերայի երաժշտադաստիարակչական նշանակությունը:	դոցենտ՝ Մ. Բաղդասարյան
3.	Պողոսյան Սոնա Արմենի	Կրտսեր դպրոցականների ստեղծագործական ունակությունների զարգացման հիմնախնդիրները:	մ.գ. դոկտոր, պրոֆեսոր՝ Յ. Յուզբաշյան
4.	Դանիելյան Անի Սարգսի	Ստեփան Լուսիկյանի ստեղծագործությունները «Երաժշտություն» առարկայի դասերին:	ա.գ.թ., դոցենտ՝ Ա. Հարությունյան
5.	Առաքելյան Ջուլիետա Գեղամի	Ազգային երգը, պարը, ազգային ավանդույթների պահպանումը «Երաժշտություն» առարկայի միջոցով:	դասախոս՝ Ն. Մադոյան
6.	Սուչյան Սվետլանա Արթուրի	Վիպերգերի և պատմական երգերի դերը անձի ձևավորման գործընթացում:	մ.գ.թ., դոցենտ՝ Գ. Մելիքսեթյան
7.	Հովհաննիսյան Ռիմա Գառնիկի	Օրորները՝ դպրոցականների ազգային արժեհամակարգի ձևավորման հիմք:	մ.գ.թ., դոցենտ՝ Գ. Մելիքսեթյան
8.	Սահակյան Վարդիթեր Արթուրի	Ալինա Փահլևանյանի «Երգե՛, բլբուլս» հայկական ժողովրդական մանկական երգերի ժողովածուի կրթադաստիարակչական նշանակությունը:	ա.գ.թ., Ա. Հակոբյան
9.	Կոնինյան Կարեն Հրաչյայի	Արեգ Լուսինյանի «Կրկես» դաշնամուրային պիեսների ժողովածուի կիրառումը դպրոցում:	ա.գ.թ. Ա. Հակոբյան
10.	Շեվչենկո Անուշ Օլեգի	Արամ Խաչատրյանի «Մանկական ալբոմը»-ը ''Երաժշտություն'' առարկայի դասերին	դասախոս՝ Ն. Մադոյան
11.	Էնդեման Լիլիթ Գևորգի	Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների երաժշտական ուսուցումը «Dalcroze Eurhythmics» մեթոդի կիրառմամբ	ա.գ.թ., դոցենտ՝ Ա. Ադամյան

Ամբիոնի Վարիչ՝ Ս. Էլբակյանը ամբիոնի քննարկմանը ներկայացրեց նաև առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի Անի Վագրիկի Մանուչարյանի մագիստրոսական ատենախոսության խորագիրը՝ ''Հոգևոր երաժշտության դերը հիմնական դպրոցի աշակերտների բարոյահոգեբանական դաստիարակության գործում'': Մագիստրոսական ատենախոսության ղեկավար նշանակվեց մ.գ.թ., դոցենտ՝ Գ. Մելիքսեթյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մագիստրոսական ատենախոսութունների թեմաները և ղեկավարներին:

Նիստի նախագահ՝ Ս.Էլբակյան

Քարտուղար՝ Ա.Կարապետյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

2021թ.-ի հոկտեմբերի 14-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը, պրոֆեսորադասախոսական կազմը:

ՀՈԿՏԵՄԲԵՐ - 1. Առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մասնագիտական/:

2. Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը:

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատման /մասնագիտական/ հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ՝ Սարգիս Էլբակյանը ներկայացրեց առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաները /մասնագիտական/:

1. Կոմիկական օպերաներ:
2. Յ. Հայդնի դերը համաշխարհային երաժշտարվեստում:
3. Յ.Հայդնի Նելսոն մեսսան և «Տարվա եղանակներ» օրատորիան:
4. Վ.Մոցարտի դերը համաշխարհային երաժշտարվեստում:
5 . Լ.Բեթհովենի ստեղծագործական ուղին:

6. Վ. Մոցարտի օպերային ռեֆորմի սկզբունքները:

7. Վ.Մոցարտի buffo օպերաները:

8. Լ.Բեթհովենի հերոսական կերպարները:

9. Լ.Բեթհովենը և ռոմանտիզմը:

10. Ռոմանտիզմը երաժշտության մեջ:

11. Ռոմանտիզմը և Ֆ.Շուբերտի արվեստը:

12. Դասական և ռոմանտիկ միտումների հարաբերակցությունը Ֆ.Շուբերտի ստեղծագործության մեջ:

13. Ն.Պագանինիի վիրտուոզ կատարողական նորարարությունները:

14. Կ.Մ.Վեբերի 'Կախարդական հրաձիգ' օպերայի նորարարությունները:

15. Ֆ.Մենդելսոնի 'Շոտլանդական' և 'Իտալական' սիմֆոնիաները:

16. Ֆ.Մենդելսոնի սիմֆոնիկ երաժշտությունը:

17. Մենդելսոնի դաշնամուրային ստեղծագործությունը:

18. Ֆ.Շոպենի դաշնամուրային կոնցերտների առանձնահատկությունները

19. Բրամսի թ.1սիմֆոնիա և 'Գերմանական ռեքվիեմը':

20. Ռ.Վագների օպերային ռեֆորմի սկզբունքները:

21. Ֆ.Լիստի տրանսցեդենտալ էտյուդներ:

22. Ֆ.Լիստի դաշնամուրային կոնցերտներ:

23. Ռ.Շումանի ստեղծագործությունը:

24. Հեքիաթային կերպարները Է.Գրիգի ստեղծագործություններում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել առկա ուսուցման 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաները /մասնագիտական/:

ԼՍԵՑԻՆ – Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքի մասին հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը նշեց, որ էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքները բարեհաջող են ընթանում:

ՈՐՈՇԵՑԻՆ - Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը համարել հավարար:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասպիրանտուրայի մասնագիտական որակավորման քննության հարցաշարերի բովանդակությունը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ.գ.դոկտոր, պրոֆեսոր՝ Յ. Յուզբաշյանը ներկայացրեց ասպիրանտուրայի մասնագիտական որակավորման քննության 100 հարցից և հավելյալ 20 հարցից բաղկացած հարցաշարերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի պ\կ Ս. Էլբակյանը հաստատեց մասնագիտական որակավորման քննության 100 հարցից բաղկացած և հավելյալ 20 հարցից բաղկացած հարցաշարերը:

ԼՍԵՑԻՆ – Ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորումների բաղադրիչների հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչ Սարգիս Էլբակյանը նշեց, որ ավարտական կուրսերում ամփոփիչ ատեստավորման քննությունները ունեն հետևյալ բաղադրիչները.

Մանկավարժական պրակտիկա – 20%
Նվագարան – 40%
Խմբավարություն և խմբերգային դասարան – 40%

ՈՐՈՇԵՑԻՆ - Ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորումների քննությունների բաղադրիչների հարցը:

Նիստի նախագահ՝ Ս.Էլբակյան

Քարտուղար՝ Ա.Կարապետյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

2021թ. նոյեմբերի 11-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պ\կ. ՝ Ս.Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական կազմը:
ՕՐԱԿԱՐԳ –

1. Դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատությունների հաշվետվություն:
2. 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի
ղեկավարի հաշվետվություն:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսները ներկայացրին իրենց գիտական աշխատանքները, որոնք կատարվել են 2021 թ.- ին:

Հեղինակ՝ Ա.Ա.Հ	**Անվանում**	**Տպագիր կամ ձեռագիր իրավունքով**	**Հրատարակչություն**	**Ծավալ**
Վ. Եղիգարյան	К вопросу о пианизме А.Бабаджаняна՝	Տպագիր	X Международная научно-практическая конференция “Искусство и художественное образование в контексте межкультурного взаимодействия” – Казань, 22 октября 2021	8 էջ
Մ.Բաղդասարյան	Творческая палитра Юрия Геворкяна՝	Տպ. մեջ է	Ժողովածու «Հայ կոմպոզիտոր» Երևան, 2021թ.	5 էջ
Ա.Հարությունյան Ս. Էլբակյան	‘Концерт для скрипки и симфонического оркестра Арно Бабаджаняна՝		X Международной научно-практической конференции «ИСКУССТВО И ХУДОЖЕСТВЕННОЕ ОБРАЗОВАНИЕ В КОНТЕКСТЕ МЕЖКУЛЬТУРНОГО ВЗАИМОДЕЙСТВИЯ» Казань 2021.	7 էջ
Ա. Հարությունյան	‘Սոլֆեջիո՝ (լրամշակված): Ուսումնական ձեռնարկ	Տպագիր	Հեղինակային հրատ., Երևան, 2021թ.	72 էջ
Ա. Հակոբյան	Կոունկ երգը և հեղինակային արվեստի բնութագրական գծերը՛՛:	Տպագիր	Մանկավարժական միտք հրատ., Երևան, 2021թ.	9 էջ
Ա. Հակոբյան	Հայ գուսանական երգարվեստի երաժշտական լեզվի որոշ առանձնահատկությունները՝	Տպագիր	Հեղինակային հրատարակչություն, Երևան, 2021թ.	61 էջ
Ռ. Հակոբովա	Влияние природных закономерностей на формирование музыкальных	Տպագիր	Science of Europe vol 3 *79 Praha, Czech Republic. 2021թ.	3-5 էջեր

	произведений՝.			
AKBAROVA G. DYGANOVA E. BATYRSHINA G. ADAMYAN A.	‘Distance choral conducting training of future music teachers’.	Online	Revista on line de Política e Gestão Educacional, Araraquara, v. 25, n. esp.2, , 2021.	750-758 էջեր
Ե. Դադոյան	«Из истории детской фортепианной музыки» .	Տպագիր	Пенза: МЦНС «Наука и Просвещение». 2021	158-162 էջեր
Ն. Մադոյան	Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի ստեղծման ակունքներում՝: Հոդված	Տպ. մեջ է	‘Հայագիտական հանդես՝ գիտական պարբերական, Երևան, 2021-2022թ.	8 էջ
Խաչատրյան Արաքսյա, Մարգարյան Նաիրա	Խմբերգային երգեցողության ազդեցությունը երեխաների գեղագիտական ճաշակի ձևավորման և մտավոր ունակությունների զարգացման վրա: Գործնական աշխատանքը երգչախմբում:	Տպ. մեջ է	‘Մանկավարժական միտք՝, Զանգակ հրատ., 2021թ.	11 էջ
Ա. Կոստանյան	Вечные образы в искусстве прошлого и настоящего: Джеральд Мур - пианист и концертмайстер: Проблемы концертмайстерского мастерства и методика их решений՝.	Տպագիր	Международный научный журнал <<Научные вести>> 2021г.	25-39 էջեր

ՈՐՈՇԵՑԻՆ - Ամբիոնի դասախոսների գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հաշվետվության հարցը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրակտիկայի ընթացքը ներկայացրեց Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ, պրակտիկայի ղեկավար՝ Շուշանիկ Մաթևոսյանը, նշելով, որ գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտական կրթություն մասնագիտության առկա ուսուցման բակալավրիատի 2021-2022 ուս. տարվա երաժշտական կրթություն մասնագիտության 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցկացվեց սեպտեմբերի 13-ից հոկտեմբերի 22-ը՝ ՀՊՄՀ հիմն. դպրոցում (մեթոդիստ՝ Դադոյան Ելենա) և «Վարդանանց ասպետներ» թիվ 106 հիմն. դպրոցում (մեթոդիստ՝ Մարգարյան Նաիրա):

Պրակտիկային նախապատրաստելու համար կազմակերպվել էր կոնֆերանս պրակտիկայի ղեկավար՝ Շ. Մաթևոսյանի կողմից՝ ուսանողների, մեթոդիստների մասնակցությամբ, որտեղ ներկայացվեց մանկավարժական պրակտիկայի նպատակը, խնդիրները, ընթացքը և պահանջները: Ուսանողները դաս են անցկացրել 1-ից 7-րդ դասարաններում: Ամեն մի ուսանող պարապել է 6 դաս: Կազմակերպել են միջոցառումներ: Դասընթացը մենկնարկվել է googl classroom –ի հարթակում ևս: Տեղադրվել են դասի պլանները և դասի վերլուծություններ են կատարվել:

ՈՐՈՇԵՑԻՆ - 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Դասաբաշխումների հետ կապված փոփոխությունների հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ամբիոնի վարիչի պ\կ Ս. Էլբակյանը ներկայացրեց, որ ամառային դասաբաշխումից հետո տեղի է ունենում վերաբաշխում՝ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ հեռակա բակալավրի 1-ին կուրսի ուսանողների ընդունելությունից հետո: Ուստի 2021-2022 ուս. տարվա հեռակա 1-ին կուրսի ընդունելությունից հետո արված վերաբաշխման արդյունքում տեղի է ունեցել ծավալի փոփոխություն: Դասախոսներից պահանջվեց ստուգել իրենց դասաժամերի հետ կատարված փոփոխությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Դասաբաշխման հետ կապված հարցը համարել լուծված:

ԼՍԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ՝ Ս.Էլբակյանը առաջադրեց արվեստագիտության թեկնածու, դասախոս Արմինե Աշոտի Հակոբյանին դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ՝ Ս.Էլբակյանը, մ.գ.թ., դոցենտ՝ Գ. Մելիքսեթյանը: Նրանք նշեցին, որ Արմինե Հակոբյանը ունի 4 տարվա աշխատանքային փորձ, մեծ հեղինակություն է վայելում ուսանողների և դասախոսների շրջանում, դրսևորում է բարձր մասնագիտական պրոֆեսիոնալիզմ, բարեխիղճ և պատասխանատու է իր մանկավարժական գործունեության մեջ: Ունի 3 գիտական հոդվածներ՝ հայերեն լեզվով: Ունի նաև 1 ուսումնամեթոդական ձեռնարկ՝ <<Հայ գուսանական երգարվեստի երաժշտական լեզվի որոշ առանձնահատկություններ>>:

ՈՐՈՇԵՑԻՆ- Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու Արմինե Աշոտի Հակոբյանի թեկնածությունը՝ դոցենտի գիտական կոչում ստանալու վերաբերյալ դրական կարծիքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԷԼԲԱԿՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

2021թ.-ի դեկտեմբերի 8-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պ\կ. ՝ Ս.Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական կազմը:

ՕՐԱԿԱՐԳ – 1. Զմեռային քննաշրջանի նախապատրաստում:

2.Հեռակա ուսուցման ուսումնական գործունեության նախապատրաստում:

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Զմեռային քննաշրջանի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը ներկայացրեց ավարտվող դասընթացները բակալավրիատում. հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն - 1-ին կուրս, սոլֆեջիո և հարմոնիա – 2-րդ կուրս, հայ և համաշխարհային երաժշտության պատմություն - 3-րդ կուրս, երգչախմբային փոխադրում – 4-րդ կուրս: Մագիստրատուրայում՝ մեներգեցողության և խմբավարության դասավանդման մեթոդիկա – 1-ին կուրս, մեներգեցողություն և խմբավարություն – 2-րդ կուրս և հանձնարարեց դասախոսներին նախապատրաստել քննական տոմսերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ձմեռային քննաշրջանի նախապատրաստումը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ - Հեռակա ուսուցման ուսումնական գործունեության նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը նշեց, որ դեկտեմբերի 6-ից սկսվել է հեռակա ուսուցման բակալավրիատի 1-5-րդ կուրսերի խորհրդատվությունների շրջանը, որն իրականացվում է հեռավար: Այժմ անհատական առարկաների դասախոսներից պահանջվում է կազմել հստակ դասացուցակներ և հունվար ամսին ընդունել ուսանողներին ըստ դասացուցակի:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հեռակա ուսուցման բակալավրիատի 2021-2022 ուս.տարվա ուսումնական գործունեության նախապատրաստումը համարել բավարար:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Գայանե Հարությունյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Գայանե Հարությունյանի գիտական ղեկավար՝ մ.գ. դոկտոր, պրոֆեսոր Յ. Յուզբաշյանը նշեց, որ Գայանեն հաշվետու ժամանակահատվածում տպագրել է երկու հոդված՝ <<Հայ երաժշտամանկավարժական մտքի պատմությունից>> և <<Ազգային երաժշտության դերը հայ երեխայի կյանքում>>, հանձնել է որակավորման բոլոր քննությունները և նրա թեկնածուական ատենախոսությունը՝ <<Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց>>, լիովին պատրաստ է պաշտպանության:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը առաջարկեց ատեստավորել հայցորդ Գայանե Հարությունյանին և նրա ատեստավորման հարցը դրական կարծիքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ:

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ Սերգեյ Խաչատրյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը և մ.գ. դոկտոր, պրոֆեսոր Յ. Յուզբաշյանը նշեցին, որ հայցորդ Սերգեյ Խաչատրյանը մինչ օրս չի ներկայացել ամբիոն և չի հանդիպել գիտական ղեկավարի հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը առաջարկեց չատեստավորել հայցորդ Սերգեյ Խաչատրյանին և նրա ատեստավորման հարցը բացասական կարծիքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ:

ԼՍԵՑԻՆ - Ա.գ.թ., դոցենտ Վ. Եղիգարյանի՝ <<Արամ Խաչատրյանի Մանկական ալբոմը>> մեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը նշեց, որ ա.գ.թ., դոցենտ Վ. Եղիգարյանի՝ <<Արամ Խաչատրյանի Մանկական ալբոմը>> մեթոդական ձեռնարկը բավական լուրջ հետազոտական աշխատանք է իրենից ներկայացնում և արժանի է տպագրության: Արտահայտվեցին դոցենտ Ս. Շահսուվարյանը, դոցենտ Շ. Թադևոսյանը և ա.գ.թ., դոցենտ Ա. Ադամյանը, հիմնավորելով ձեռնարկի արդիականությունն ու պահանջված լինելը թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա.գ.թ., դոցենտ Վ. Եղիգարյանի՝ <<Արամ Խաչատրյանի Մանկական ալբոմը>> մեթոդական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

ԼՍԵՑԻՆ – ԲՈՒՀ-ի 100-ամյակին նվիրված կայանալիք միջոցառմանը՝ երաժշտության մանկավարժության ամբիոնի մասնակցության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը նշեց, որ միջոցառումը կկայանա Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի դահլիճում, որին կմասնակցեն երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսները և ուսանողները: Ելույթով հանդես կգան

նաև <<Ավե Մարիա>> երգչախումբը (գեղ. ղեկավար՝ դոցենտ Ա. Բաբուրյան), քանոնահարների անսամբլը, կիթառահարների անսամբլը, կլինեն սոլո համարներ, դուետներ և այլն:

ՈՐՈՇԵՑԻՆ - ԲՈՒՀ-ի 100-ամյակին նվիրված կայանալիք միջոցառմանը՝ երաժշտության մանկավարժության ամբիոնի մասնակցության հարցը համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

2022թ.-ի հունվարի 31-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական /առցանց/ նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ. Ս. Էլբակյանը, պրոֆեսորադասախոսական կազմը:

ՕՐԱԿԱՐԳ –
1. Ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփում:
2. Առկա 2-րդ և 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաների նախապատրաստում:
3. Հեռակա ուսուցման համակարգի մանկավարժական պրակտիկաների նախապատրաստում:
4. Մագիստրատուրայի /ՄԿԾ/ և բակալավրիատի /ԲԿԾ/ կրթական ծրագրերի լրամշակման հարցը:
5. Առկա ուսուցման համակարգի 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի և թեմատիկ տրոհումների հաստատում:
6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, ա.գ.թ., դոցենտ՝ Ա.Հարությունյանը ներկայացրեց ձմեռային քննաշրջանի ամփոփման արդյունքները, նշելով, որ առկա ուսուցման բակալավրիատի 1-ին կուրսում «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» առարկայից լուծարք է մնացել 4 ուսանող, 2-րդ կուրսում՝ «Սոլֆեջիո և հարմոնիա» առարկայից բոլորը ստացել են բավարար գնահատական, 4-րդ կուրսում «Ձայնադրում» առարկայից 2 ուսանող անբավարար՝ վարձավճարի պատճառով: Առկա ուսուցման մագիստրատուրայի 1-ին կուրսում

«Մենեջերագեցողության և խմբավարության դասավանդման մեթոդիկա» առարկայից 10 ուսանողից անբավարար ստացողներ չեն եղել:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ձմեռային քննաշրջանի արդյունքների ամփոփումը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Առկա 2-րդ և 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաների նախապատրաստում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի պրակտիկայի ղեկավար, ասիստենտ Շուշանիկ Մաթևոսյանը ներկայացրեց, որ առկա ուսուցման բակալավրիատի 2-րդ կուրսը անցնելու է իր մանկավարժական պրակտիկան 2022թ. փետրվարի 9-ից մինչև մայիսի 18-ը (շաբաթական մեկ օր) ՀՊՄՀ-ի թիվ 57 և «Վարդանանց ասպետներ» թիվ 106 հիմն. դպրոցներում: Մեթոդիստներն են՝ Նարիա Մարգարյանը (մանկավարժ՝ Արմենուհի Մանուկյան, հոգեբան՝ Լիլիթ Վարդանյան) և Ելենա Դադոյանը (մանկավարժ՝ Լևոն Նազարյան, հոգեբան՝ Արուսյակ Գևորգյան)::

Առկա ուսուցման բակալավրիար 3-րդ կուրսը անցնելու է իր մանկավարժական պրակտիկան 2022 թ. 2022թ. փետրվարի 9-ից մինչև մարտի 22-ը Շահումյանի անվ. թիվ 1 և Վազգեն Ա-ի անվ. թիվ 168 հիմնական դպրոցներում: Մեթոդիստներ՝ Արաքսյա Խաչատրյանի և Մարիաննա Ավետիսյանի ղեկավարությամբ:

Շ.Մաթևոսյանը ներկայացրեց նաև հաշվետվություն առկա ուսուցման բակալավրիատի 3-րդ, 4-րդ, հեռակա՝ 4-րդ, 5-րդ և առկա մագիստրատուրա 2-րդ կուրսի 1-ին կիսամյակի վերաբերյալ, նշելով, որ առկա ուսուցման բակալավրիատի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցկացվել է սեպտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 22-ը (շաբաթական մեկ օր): Կուրսը բաղկացած էր 26 ուսանողներից, որից 2 ուսանող դուրս է մնացել համալսարանից և 1 ուսանող տեղափոխվել է հեռակա ուսուցման համակարգ: Մանկավարժական պրակտիկան անցկացվել է Ս.Շահումյանի անվան թիվ 1 հիմն. Դպրոցում մեթոդիստ՝ Ս.Պետրոսյան /13 ուսանող, 1-ը դուրս է մնացել համալսարանից/ և Վ.Սարգսյանի անվ. Թիվ 168 հիմն. դպրոցում մեթոդիստ՝ Ա.Խաչատրյան /13 ուսանող, 2 ուսանող դուրս են մնացել/: Աշխատում էին հոգեբանների և մանկավարժների հետ: Մեթոդիստները վերահսկում էին դասապրոցեսը: Դասընթացը մենկնարկվել է Google classroom հարթակում ևս: Տեղադրվել են հոգեբանի և մանկավարժի առաջադրանքները, դասի վերլուծություններ են կատարվել: Պրակտիկայի վերջում կազմակերպվել են միջոցառումներ, աշակերտների մասնակցությամբ: Հունվարի 12-ին կայացել է պրակտիկայի թղթապանակի պաշտպանությունը, բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի 2021-2022 ուս. տարվա 1-ին կիսամյակի երաժշտական կրթություն մասնագիտության 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցկացվել է սեպտեմբերի 13-ից հոկտեմբերի 22-ը ՀՊՄՀ հիմնական դպրոցում, մեթոդիստ՝ Դադոյան Ելենա և «Վարդանանց ասպետներ» թիվ 106 հիմնական դպրոցում, մեթոդիստ՝

Մարգարյան Նաիրա: Կուրսը բաղկացած էր 14 ուսանողներից, 2 ուսանող դուրս են մնացել համալսարանից:
Պրակտիկային նախապատրաստելու համար կազմակերպվել էր կոնֆերանս պրակտիկայի ղեկավար՝ Շ. Մաթևոսյանի կողմից ուսանողների, մեթոդիստների մասնակցությամբ, որտեղ ներկայացվել է մանկավարժական պրակտիկայի նպատակը, խնդիրները, ընթացքը և պահանջները: Դաս են անցկացրել 1-ից 7-րդ դասարաններում: Ամեն մի ուսանող պարապել է առնվազն 6 դաս: Կազմակերպել են միջոցառումներ: Դասընթացը մենկնարկվել է Google classroom հարթակում ևս: Տեղադրվել են դասի պլանները, դասի վերլուծություններ են կատարվել: Դեկտեմբերի 15-ին կայացել է պրակտիկայի թղթապանակի պաշտպանությունը, բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ:

Հեռակա 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցել է նոյեմբերի 1-ից 28-ը՝ առցանց: Կուրսը բաղկացած էր 14 ուսանողներից, կիսվել է 2 խմբի, մեթոդիստ՝ Օջախյան Արմինե - 7 ուսանող (1 ուսանող դուրս է մնացել), մեթոդիստ՝ Նաիրա Մադոյան - 7 ուսանող: Ուսանողները շատ պարտաճանաչ մասնակցություն են ցուցաբերել, վարել են նմանակման /իմիտացիոն/ դասեր առցանց հարթակում: Լրացրել են դասի պլանն ու էլեկտրոնային թղթապանակը, այնուհետև դրանք տեղադրել դասընթացում: Ամեն շաբաթվա վերջում ներկայացրել են հաշվետվություն՝ շաբաթվա ընթացքում իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ: Դեկտեմբերի 21-ին կայացավ պրակտիկայի թղթապանակի պաշտպանությունը, բոլոր ուսանողները ստացան դրական գնահատականներ:

Հեռակա 5-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցել է նոյեմբերի 1-ից 28-ը՝ առցանց: Կուրսը բաղկացած էր 26 ուսանողներից, որից 2 ուսանող դուրս է մնացել համալսարանից և 1 ուսանող տեղափոխվել է հեռակա: Մանկավարժական պրակտիկան անցկացվել է Ս.Շահումյանի անվան թիվ 1 հիմն. Դպրոցում մեթոդիստ՝ Ս.Պետրոսյան /13 ուսանող, 1-ը դուրս է մնացել համալսարանից/ և Վ.Սարգսյանի անվ. Թիվ 168 հիմն. դպրոցում մեթոդիստ՝ Ա.Խաչատրյան /13 ուսանող, 2 ուսանող դուրս են մնացել /:

Մագիստրատուրա 2-րդ կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկան անցել է հոկտեմբերի 19-ից մինչև նոյեմբերի 9-ը՝ առցանց: Կուրսը բաղկացած էր 5 ուսանողներից: Մեթոդիստներ՝ Հարությունյան Աննա, Մելիքսեթյան Գոհար, Բաղդասարյան Մարգարիտա, Մադոյան Նաիրա: Ուսանողները մասնակցել են տարբեր դասախոսների անհատական դասերին, վերլուծել են ուսանողների դասերը, փորձել են իրենք դաս վարել ուսանողների հետ: Թղթապանակի պաշտպանությունը կայացել է նոյեմբերի 23-ին: Բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ:

ՈՐՈՇԵՑԻՆ - Առկա 2-րդ և 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկաների նախապատրաստումը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի պրակտիկայի ղեկավար, ասիստենտ Շուշանիկ Մաթևոսյանը ներկայացրեց, որ հեռակա ուսուցման 3-րդ կուրսի ուսանողները 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի մանկավարժական պրակտիկան անցնում են 2022 թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 25-ը Խ. Աբովյանի անվ. թիվ 2, թիվ 152 և ՀՊՄՀ թիվ 57 հիմն. դպրոցներում: Մեթոդիստներ՝ Նաիրա Մաղոյանի, Արուսյակ Կոստանյանի և Ռիմմա Հակոբովայի ղեկավարությամբ: Նա նշեց նաև, որ 2 ուսանող անցնում են անհատական պրակտիկա ըստ աշխատանքի վայրի, 1 ուսանող՝ սահմանամեջ գոտում գտնվող դպրոցում («Սյունիքի մարզի ք. Կապանի թիվ 3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ):
ՈՐՈՇԵՑԻՆ - Հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի մանկավարժական պրակտիկայի նախապատրաստման հարցը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Մագիստրատուրայի /ՄԿԾ/ և բակալավրիատի /ԲԿԾ/ կրթական ծրագրերի լրամշակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, ա.գ.թ., դոցենտ՝ Ա.Հարությունյանը նշեց, որ ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ՝ Սարգիս Էլբակյանը, իր գլխավորությամբ ձևավորված հանձնաժողովի համագործակցությամբ լրամշակել և արդի պահանջներին են համապատասխանեցրել բակալավրի և մագիստրատուրայի կրթական ծրագրերը;

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել մագիստրատուրայի /ՄԿԾ/ և բակալավրիատի /ԲԿԾ/ կրթական ծրագրերը:

ԼՍԵՑԻՆ – Առկա, հեռակա ուսուցման համակարգի և առկա մագիստրատուրայի 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների, հարցաշարերի և ուսումնամեթոդական փաթեթների հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոսները հաստատման ներկայացրեցին 2021-2022 ուս.տարվա 2-րդ կիսամյակի վերանայման և մշակման ենթարկված առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը և ուսումնամեթոդական փաթեթները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել առկա, հեռակա ուսուցման համակարգի և առկա մագիստրատուրայի 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները, հարցաշարերը և ուսումնամեթոդական փաթեթները:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Արուսյակ Կոստանյանի <<Հոգու հույզեր>> հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ՝ մեթոդական ցուցումներով աշխատանքի տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., պրոֆեսորի պ/կ՝ Սարգիս Էլբակյանը նշեց, որ ամբիոնի դասախոս Արուսյակ Կոստանյանի <<Հոգու հույզեր>> հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ՝ մեթոդական ցուցումներով աշխատանքը արժանի է տպագրության: Արտահայտվեցին մ.գ.թ., դոցենտ Գոհար Մելիքսեթյանը, դոցենտ Շաքե Թադևոսյանը և ա.գ.թ., դոցենտ Աննա Ադամյանը, հիմնավորելով աշխատանքի արդիականությունն ու պահանջարկը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Արուսյակ Կոստանյանի <<Հոգու հույզեր>> հայ կոմպոզիտորների երգերի դաշնամուրային փոխադրումներ՝ մեթոդական ցուցումներով աշխատանքը երաշխավորել տպագրության:

Նիստի նախագահ՝ Ս.Էլբակյան
Քարտուղար՝ Ա.Կարապետյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

2022թ. փետրվարի 15-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչ՝ Ս.Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական կազմը:

ՕՐԱԿԱՐԳ -
1. 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:
2. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատում:
3. Առկա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մեթոդիկա/:
4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – 1-ին կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, ա.գ.թ., դոցենտ Աննա Հարությունյանը ներկայացրեց երաժշտատեսական առարկաներ դասավանդող դասախոսների դասարաններում իրականացրած դասալսումները, որոնք կայացել են Մ.Բաղդասարյանի, Ա. Հակոբյանի, Ա. Հարությունյանի և Գ. Մելիքսեթյանի դասարաններում:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի ա.գ.թ., դոցենտ Վ.Եդիգարյանը ներկայացրեց «Նվագարան» առարկան դասավանդող դասախոսների մոտ կայացած դասալսումները՝ Ս. Շահսուվարյանի, Վ. Եդիգարյանի, Տ. Ալավերդյանի, Շ. Թադևոսյանի և Լ. Խաչատրյանի դասարաններում:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ Շ.Մաթևոսյանը ներկայացրեց «Խմբավարություն և խմբերգային դասարան» և «Ձայնադրում» առարկաներ դասավանդող դասախոսների մոտ իրականացրած դասալսումները, որոնք կայացել են Ռ. Հակոբովայի, Ա. Խաչատրյանի, Մ. Սիմոնյանի, Ա. Բաբուրյանի, Զ. Սայադյանի և Մ. Ավետիսյանի դասարաններում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Դասալսումների ընթացը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, ա.գ.թ., դոցենտ Աննա Հարությունյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակի երաժշտատեսական առարկաներ դասավանդող դասախոսների դասարաններում պլանավորված բաց դասերի և դասալսումների գրաֆիկը: Դասալսումները կկայանան Գ. Մելիքսեթյանի, Ն. Մադոյանի և Ա. Հակոբյանի դասարաններում:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի ա.գ.թ., դոցենտ Վ.Եդիգարյանը ներկայացրեց «Նվագարան» առարկան դասավանդող դասախոսների դասարաններում պլանավորված բաց դասերի և դասալսումների գրաֆիկը: Դասալսումները կկայանան Լ. Խաչատրյանի, Ն.Բաղալյանի, Շ. Թադևոսյանի, Ա. Մկրտչյանի, Ֆ. Ավետիսյանի և Ա. Կոստանյանի դասարաններում:

Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ Շ.Մաթևոսյանը ներկայացրեց «Խմբավարություն և խմբերգային դասարան» և «Ձայնադրում» առարկաներ դասավանդող դասախոսների դասարաններում պլանավորված բաց դասերի և դասալսումների գրաֆիկը: Դասալսումները կկայանան Է. Դանիելյանի, Ս. Պետրոսյանի, Շ. Մաթևոսյանի, Ն. Մարգարյանի, Ա. Օջախյանի, Ա. Գասպարյանի, և Ք. Խաչիկյանի դասարաններում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների գրաֆիկը:

ԼՍԵՑԻՆ – Հեռակա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաների հաստատում /մեթոդիկա/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի պրոֆեսոր, մ.գ.դոկտոր Յ. Յուզբաշյանը ներկայացրեց հեռակա ուսուցման բակալավրիատի 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաները:

1. Ունկնդրումը, երգեցողությունը, մանկական նվագարաններով նվագը, որպես երաժշտության դասի գործունեության ձևեր:
2. Ժամանակակից երաժշտական դաստիարակության նպատակները և խնդիրները:
3. Երգը, պարը, քայլերգը, որպես երաժշտական դաստիարակության հիմք:
4. «Երաժշտություն» առարկայի բովանդակությունը և ուսումնական ընթացքի կազմակերպումը:
5. Ռիթմը՝ որպես աշակերտի երաժշտական դաստիարակության մաս:
6. Երաժշտական արվեստի ֆունկցիաները և դրանց իրականացումը երաժշտական կրթության մեջ:
7. Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքը աշակերտների հետ:
8. «Երաժշտության» ուսուցչի մանկավարժական կուլտուրան:
9. Երաժշտական կրթության հատուկ մեթոդների կիրառումը երաժշտության դասին:

10. Ուսուցման համընդհանուր մեթոդների կիրառումը երաժշտության դասին:
11. Դմիտրի Կաբալևսկու հանրակրթական դպրոցի «Երաժշտություն» առարկայի դասավանդման սկզբունքներն ու մեթոդները:
12. «Երաժշտություն» առարկայի տեսական և պատմական հիմունքները:
13. Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը:
14. Միջառարկայական կապերը դպրոցում:
15. Երաժշտության դասը՝ երաժշտական կրթության հիմնական ձև:
16. Դպրոցականների բազմաձայն երգեցողության զարգացումը:
17. Դպրոցականների երաժշտական լսողության զարգացման մեթոդիկան:
18. Երաժշտական դաստիարակության բովանդակությունը /1, 2, 3, 4, 5, 6, 7/ դասարանում:
19. Երաժշտական գործունեության տեսակները /1, 2, 3, 4, 5, 6, 7, / դասարանում:
20. Երգչային ունակությունների և հմտությունների զարգացումը /1, 2, 3, 4, 5, 6, 7, / դասարանում:
21. Ձայնափոխումը /մուտացիան/ դպրոցի միջին դասարաններում:
22. Ռրթմական զգացողության զարգացումը տարրական /կամ կրտսեր/ դասարաններում:
23. Երաժշտության ունկնդրումը /1, 2, 3, 4, 5, 6, 7/ դասարանում, որպես երեխաների երաժշտական դաստիարակության գործունեության կարևոր տեսակներից մեկը:
24. Ստեղծագործական ունակությունների զարգացումը կրտսեր դպրոցում:
25. Արվեստների փոխկապակցվածությունը 5-րդ դասարանում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել առկա 3-րդ կուրսի կուրսային աշխատանքների թեմաները:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

2022թ.-ի մարտի 7-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական կազմը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ - 1. Մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվություն:

2. 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի հաշվետվություն:

3. Մագիստրատուրայի 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստում:

4. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Մանկավարժական պրակտիկայի ղեկավարի հաշվետվությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ, պրակտիկայի ղեկավար՝ Շ.Մաթևոսյանը ներկայացրեց, որ 2021-2022թթ. ուսումնական տարվա առկա 3-րդ կուրսի ուսումնաճանաչողական պրակտիկան անցավ սեպտեմբերի 14-ից մինչև դեկտեմբերի 22-ը (շաբաթական մեկ օր): Կուրսը բաղկացած էր 26 ուսանողներից, որից 2 ուսանող դուրս է մնացել համալսարանից և 1 ուսանող տեղափոխվել է հեռակա: Մանկավարժական պրակտիկան անցկացվել է Ս.Շահումյանի անվան թիվ 1 հիմն. դպրոցումմեթոդիստ՝ Ս.Պետրոսյան/13 ուսանող, 1-ը դուրս է մնացել համալսարանից/ և Վ.Սարգսյանի անվ. Թիվ 168 հիմն. դպրոցում մեթոդիստ՝ Ա.Խաչատրյան/13

ուսանող, 2 ուսանող դուրս են մնացել /: Աշխատում էին հոգեբանների և մանկավարժների հետ: Մեթոդիստները վերահսկում էին դասապրոցեսը: Դասընթացը մեկնարկվել է googl classroom –ի հարթակում ևս: Տեղադրվել են հոգեբանի և մանկավարժի առաջադրանքները, դասի վերլուծություններ են կատարվել: Պրակտիկայի վերջում կազմակերպեցին միջոցառումներ, աշակերտների մասնակցությամբ: Հունվարի 12-ին կայացավ պրակտիկայի թղթապանակի պաշտպանությունը, բոլոր ուսանողները ստացան դրական գնահատականներ:

Հեռակա 4-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցել է նոյեմբերի 1-ից 28-ը՝ առցանց: Կուրսը բաղկացած էր 14 ուսանողներից, կիսվել է 2 խմբի, մեթոդիստ՝ Օջախյան Արմինե- 7 ուսանող (1ուսանող դուրս է մնացել), մեթոդիստ՝ Նաիրա Մադոյան- 7 ուսանող: Ուսանողները շատ պարտաճանաչ մասնակցություն են ցուցաբերել, վարել են նմանակման /իմիտացիոն/ դասեր առցանց հարթակում: Լրացրել են դասի պլանն ու էլեկտրոնային թղթապանակը, այնուհետև դրանք տեղադրել դասընթացում: Ամեն շաբաթվա վերջում ներկայացրել են հաշվետվություն՝ շաբաթվա ընթացքում իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ: Դեկտեմբերի 21-ին կայացավ պրակտիկայի թղթապանակի պաշտպանությունը, բոլոր ուսանողները ստացան դրական գնահատականներ:
Հեռակա 5-րդ կուրսի մանկավարժական պրակտիկան անցել է նոյեմբերի 1-ից 28-ը՝ առցանց: Կուրսը բաղկացած էր 26 ուսանողներից, որից 2 ուսանող դուրս է մնացել համալսարանից և 1 ուսանող տեղափոխվել է հեռակա: Մանկավարժական պրակտիկան անցկացվել է Ս.Շահումյանի անվան թիվ 1 հիմն. դպրոցումմեթոդիստ՝ Ս.Պետրոսյան/13 ուսանող, 1-ը դուրս է մնացել համալսարանից/ և Վ.Սարգսյանի անվ. Թիվ 168 հիմն. դպրոցում մեթոդիստ՝ Ա.Խաչատրյան/13 ուսանող, 2 ուսանող դուրս են մնացել /:

ՈՐՈՇԵՑԻՆ – Մանկավարժական պրակտիկայի ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ - 2-րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների կատարման

ընթացքի հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Ատենախոսների գիտական ղեկավարները տոկոսային հարաբերությամբ ներկայացրեցին ատենախոսության պատրաստ լինելու աստիճանը:

	Մագիստրոս	Ատենախոսության թեմա	Գիտ. ղեկավար	
1.	Գրիգորյան Նաիրա	Սովորողների հայրենասիրական դաստիարակությունը երաժշտության միջոցով (հիմնական դպրոցի V-VII դասարաններում)	մ.գ.թ., դոցենտ՝ Գ. Մելիքսեթյան	80%
2.	Մանուչարյան Անի	«Հոգևոր երաժշտության դերը հիմնական դպրոցի աշակերտների բարոյահոգեբանական դաստիարակության գործում»	մ.գ.թ., դոցենտ՝ Գ. Մելիքսեթյան	90%
3.	Բալյան Գոհար	Վլադիլեն Բալյանի երգերը «Երաժշտություն» առարկայի դասընթացում	դոցենտ՝ Մ. Բաղդասարյան	70%
4.	Գալստյան Վարդան	Առնո Բաբաջանյանի կինոերաժշտությունը հիմնական դպրոցի «Երաժշտություն» առարկայի դասընթացում	ա.գ.թ., դոցենտ՝ Ա. Հարությունյան	90%

5.	Գալստյան Մերի	Մոխրոտի կերպարի դաստիարակչական դերը երաժշտության մեջ	դասախոս՝ Ն. Մադոյան	90%

ՈՐՈՇԵՑԻՆ –2 -րդ կուրսի մագիստրոսական ատենախոսությունների կատարման ընթացքի հաշվետվության հարցը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Մագիստրատուրա 1-ին կուրսի մանկավարժահետազոտական պրակտիկայի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենտ Շ.Մաթևոսյանը ներկայացրեց, որ մագիստրատուրա 1-ին կուրսի ներքոհիշյալ ուսանողների 2021-2022 ուս. տարվա մանկավարժահետազոտական պրակտիկան կազմակերպվում է նույն բաժնի առկա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերում 2022թ.-ի մարտի 30-ից մինչև ապրիլի 19-ը :

1.Սիմոնյան Լալա

մեթոդիստ՝ դոցենտ Մ. Բաղդասարյան

2. Պողոսյան Սոնա

մեթոդիստ՝ մ.գ.դ., պրոֆեսոր Յ. Յուզբաշյան

3. Էնդեման Լիլիթ

մեթոդիստ՝ ա.գ.թ., դոցենտ Ա. Ադամյան

4.Դանիելյան Անի

մեթոդիստ՝ ա.գ.թ., դոցենտ Ա. Հարությունյան

5. Գրիգորյան Շուշաննա

մեթոդիստ՝ ա.գ.թ., դոցենտ Ա. Հարությունյան

6. Սուչյան Սվետլանա

մեթոդիստ՝ մ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքսեթյան

7. Հովհաննիսյան Ռիմա

մեթոդիստ՝ մ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքսեթյան

8.Կոնինյան Կարեն

մեթոդիստ՝ ա.գ.թ., դասախոս Ա. Հակոբյան

9. Առաքելյան Ջուլիետա

մեթոդիստ՝ դասախոս Ն. Մադոյան

10. Շևչենկո Անուշ

մեթոդիստ՝ դասախոս Ն. Մադոյան

Ընթացիկ հարցեր

Լսեցին- Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Աննա Սիմոնյանի դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը՝ Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի հետ համատեղ քննարկման արդյունքում:

Արտահայտվեցին- Ս. Էլբակյանը, Վ.Կարապետյանը, Յ. Յուզբաշյանը, Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Բ.Ասմարյանը, Մ.Ամիրաղյանը:

Համատեղ նիստին երաժշտության մանկավարժության ամբիոնից մասնակցել են 24 դասախոս, իսկ նախադպրոցական մանկավարժության ամբիոնից՝ 12 դասախոս:

Ելույթ ունեցան երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ Ս. Էլբակյանը, մ.գ.դ., պրոֆեսոր՝ Յ. Յուզբաշյանը, նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի պրոֆեսոր, Աննա Սիմոնյանի գիտական ղեկավար՝ Սվելանա Մարությանը, ամբիոնի պրոֆեսոր Ալլա Դալլաքյանը, Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան, դոցենտ Հեղինե Խաչատրյանը, ամբիոնի դասախոս Մարիաննա Ամիրաղյանը և ամբիոնի վարիչի պաշտոնակատար Վլադիմիր Կարապետյանը:

Ելույթ ունեցողները ներկայացրեցին Աննա Սիմոնյանի կատարած գիտահետազոտական աշխատանքների և ուսումնամեթոդական ձեռնարկի բովանդակությունը, շեշտելով դրանց կարևորությունը, ավագ նախադպրոցականի ճանաչողական գործունեության մեջ առարկայական զարգացման դերը, միջոցները, պայմանները, բացի դրանից, ելույթ ունեցողները ներկայացրին Աննա Սիմոնյանի գիտամանկավարժական գործունեության արդյունավետությունը, անձնային որակները, մասնագիտական պատրաստվածությունը, ուսանողների հետ տարվող անհատական և խմբային աշխատանքները:

Որոշեցին- Քվեարկության արդյունքում ամբիոնի դասախոսները միաձայն (կողմ-36, դեմ-0, ձեռնպահ-0) քվեարկեցին Աննա Սիմոնյանի օգտին և որոշեցին նրա թեկնածությունը դոցենտի գիտական կոչում ստանալու վերաբերյալ դրական կարծիքով ներկայացնել ֆակուլտետի խորհուրդ:

Նիստի նախագահ՝ Ս. Էլբակյան

Նիստի քարտուղար՝ Լ. Սիմոնյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

2022թ.-ի ապրիլի 19-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի 2021-2022 ուս.տարվա հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական կազմը:

Օրակարգ՝

1. Մագիստրոսական ատենախոսությունների նախնական պաշտպանություն:
2. Ելեկտրոնային դասընթացների մշակման մասին:
3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - Մագիստրոսական ատենախոսությունների նախնական պաշտպանության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը ներկայացրեց 2021-2022 ուս. տարվա մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանողներին և նրանց մագիստրոսական ատենախոսությունների թեմաները:

Առկա մագիստրատուրայի ուսանողուհի Նաիրա Նորայրի Գրիգորյանը ներկայացրեց «Սովորողների հայրենասիրական դաստիարակությունը երաժշտության միջոցով (հիմնական դպրոցի V-VII դասարաններում)» խորագրով մագիստրոսական ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը /գիտ. ղեկ.՝ մ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքսեթյան/:

Առկա մագիստրատուրայի ուսանող Վարդան Աշոտի Գալստյանը ներկայացրեց «Առնո Բաբաջանյանի կինոերաժշտությունը հիմնական դպրոցի «Երաժշտություն» առարկայի դասընթացում» խորագրով մագիստրոսական ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը /գիտ. ղեկ.՝ ա.գ.թ., դոցենտ Ա. Հարությունյան/:

Առկա մագիստրատուրայի ուսանողուհի Անի Վագրիկի Մանուչարյանը ներկայացրեց «Հոգևոր երաժշտության դերը հիմնական դպրոցի աշակերտների բարոյահոգեբանական դաստիարակության գործում» խորագրով մագիստրոսական ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը /գիտ. ղեկ.՝ մ.գ.թ., դոցենտ՝ Գ. Մելիքսեթյան/:

Առկա մագիստրատուրայի ուսանողուհի Գոհար Վրեժի Բալյանը ներկայացրեց «Վլադիլեն Բալյանի երգերը «Երաժշտություն» առարկայի դասընթացում» խորագրով մագիստրոսական ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը /գիտ. ղեկ.՝ դոցենտ Մ. Բաղդասարյան/:

Առկա մագիստրատուրայի ուսանողուհի Մերի Ամասիայի Գալստյանը ներկայացրեց «Մոխրոտի կերպարի դաստիարակչական դերը երաժշտության մեջ» խորագրով մագիստրոսական ատենախոսության կառուցվածքը և համառոտ բովանդակությունը /գիտ. ղեկ.՝ դասախոս Ն. Մադոյան/:

ՈՐՈՇԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը որոշեց 2021-2022 ուս. տարվա մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական ատենախոսությունները դրական կարծիքով ներկայացնել պաշտպանության:

ԼՍԵՑԻՆ – Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքի մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը նշեց, որ էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքները բարեհաջող են ընթանում:

ՈՐՈՇԵՑԻՆ - Էլեկտրոնային հարթակում տարվող աշխատանքների ընթացքը համարել բավարար:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

2022թ.-ի մայիսի 5-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի 2021-2022 ուս.տարվա հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչի պաշտ.՝ Ս.Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական կազմը:

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի ամառային քննաշրջանի նախապատրաստման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ Աննա Հարությունյանը ներկայացրեց ամառային քննաշրջանի նախապատրաստման ընթացքը: Նա նշեց, որ արդեն պատրաստ և հաստատված են առկա ուսուցման բակալավրիատի 1-ին, 2-րդ, 3-րդ կուրսերի և առկա մագիստրատուրա 1-ին կուրսի քննական գրաֆիկները:

Ամբիոնի դասախոսները նշեցին, որ արդեն կազմվել են Երգչախմբագիտություն, Երաժշտության դասավանդման տեսություն և մեթոդիկա և Պոլիֆոնիա առարկաների քննական տոմսերը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ամառային քննաշրջանի նախապատրաստման ընթացքը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Առկա ուսուցման համակարգի /բակալավր/ ամփոփիչ ատեստավորման, մագիստրատուրա /մագիստրոսական ատենախոսությունների պաշտպանության/ արդյունքների ամփոփման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ՝ Ս.Էլբակյանը ներկայացրեց առկա ուսուցման բակալավրիատի և մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորման արդյունքները: Նա նշեց, որ ամփոփիչ ատեստավորմանը մասնակցող բակալավրիատի 12 ուսանողներից 8-ը ստացան գերազանց, 1-ը՝ լավ, 3-ը՝ բավարար գնահատական, իսկ մագիստրատուրայի 5 ուսանողներից 4-ը՝ գերազանց, 1-ը՝ բավարար գնահատական:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առկա ուսուցման համակարգի /բակալավր և մագիստրատուրա/ ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփումը համարել բավարար:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի ա.գ.թ., դոցենտ Աննա Ադամյանի՝ <<Մուզարտ>> դաշնամուրի հանրամատչելի ուղեցույց-ինքնուսույցը սկսնակների համար աշխատության հրատարակության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը նշեց, որ ա.գ.թ., դոցենտ Աննա Ադամյանի՝ <<Մուզարտ>> դաշնամուրի հանրամատչելի ուղեցույց-ինքնուսույցը սկսնակների համար աշխատությունը բավական լուրջ հետազոտական աշխատանք է իրենից ներկայացնում և արժանի է տպագրության: Արտահայտվեցին ա.գ.թ., դոցենտ Վ.Եղիգարյանը, դոցենտ Լ. Խաչատրյանը և մ.գ.թ., դոցենտ Գ.Մելիքսեթյանը, հիմնավորելով ձեռնարկի արդիականությունն ու պահանջված լինելը թե՛ դասախոսների և թե՛ ուսանողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի ա.գ.թ., դոցենտ Աննա Ադամյանի՝ <<Մուզարտ>> դաշնամուրի հանրամատչելի ուղեցույց-ինքնուսույցը սկսնակների համար աշխատությունը երաշխավորել հրատարակության:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

2022թ.-ի հունիսի 23-ին տեղի ունեցավ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի երաժշտության մանկավարժության ամբիոնի հերթական նիստը: Ներկա էին ամբիոնի վարիչ Ս.Էլբակյանը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝ 1. Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:

2. Առկա ուսուցման համակարգի ամառային քննաշրջանի արդյունքների ամփոփում:

3. Առարկաների ուսումնական փաթեթների վերանայում:

4. 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:

5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ -– Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը ներկայացրեց հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

Նա նշեց, որ 2022թ.-ի հունիսի 08,09-ին տեղի ունեցած ամփոփիչ ատեստավորման ավարտական քննությանը մասնակցել են երաժշտական կրթություն մասնագիտության 27 ուսանող:

Քննական արդյունքում գրանցվել են՝

Գերազանց գնահատական - 8 ուսանող

Լավ գնահատական – 18 ուսանող

Բավարար գնահատական - 1

ՈՐՈՇԵՑԻՆ – Հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսի ամփոփիչ ատեստավորման արդյունքների ամփոփումը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – Առկա ուսուցման համակարգի ամառային քննաշրջանի արդյունքների ամփոփում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը նշեց, որ առկա ուսուցման համակարգի ամառային քննաշրջանը բարեհաջող է ընթացել:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել առկա ուսուցման համակարգի ամառային քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

ԼՍԵՑԻՆ – Առարկաների ուսումնական փաթեթների վերանայում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ՝ Ս.Էլբակյանը նշեց, որ պետք է վերանայել ուսումնամեթոդական փաթեթները՝ հիմք ընդունելով 15-ուսումնական շաբաթների իրողությունը /նախկին 16-ի փոխարեն/:

ՈՐՈՇԵՑԻՆ – Առարկաների ուսումնական փաթեթների վերանայման հարցը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ – 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների քննարկում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի ասիստենետ Շ. Մաթևոսյանը ներկայացրեց «Խմբավարություն» և «Զայնադրում» առարկաներից կայացած դասալսումների արդյունքները:

Ամբիոնի դոցենտ Վ. Եղիգարյանը ներկայացրեց «Նվագարան» առարկայից կայացած դասալսումների արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ – 2-րդ կիսամյակի բաց դասերի և դասալսումների արդյունքները համարել բավարար:

Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ Մարգարիտա Բաղդասարյանի «Ռուս երաժշտության պատմություն»՝ լրացված և վերամշակված ուսումնական ձեռնարկի հրատարակության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը, ա.գ.թ, դոցենտ Ա. Հարությունյանը և մ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքսեթյանը, նշելով, որ դոցենտ Մ. Բաղդասարյանի «Ռուս երաժշտության պատմություն»՝ լրացված և վերամշակված ուսումնական ձեռնարկը հնարավորություն կտա ուսանողներին ուսումնասիրելու ռուս երաժշտության ամբողջ պատմությունը և այն արժանի է տպագրության:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ Մ. Բաղդասարյանի «Ռուս երաժշտության պատմություն»՝ լրացված և վերամշակված ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանի կազմած «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» (2012թ.) ուսումնական ձեռնարկի վերահրատարակության երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը, ա.գ.թ, դոցենտ Ա. Հարությունյանը և դոցենտ Մ. Բաղդասարյանը իրենց խոսքում նշեցին, որ այս ուսումնական ձեռնարկը ստեղծվել է Մարգարիտ Բրուտյանի «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» ձեռնարկի հիման վրա, որը բարդ է և դժվար ընկալելի I կուրսի ուսանողների համար. այդ պատճառով կազմվել է սույն ձեռնարկը, որն ավելի մատչելի և հասանելի է ապագա մանկավարժներին և նրանց

հնարավորություն է տալիս խորությամբ ուսումնասիրել հայկական ժողովրդական երաժշտության ժանրերը, դրանց երաժշտական լեզվի առանձնահատկությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանի կազմած «Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն» ուսումնական ձեռնարկը միաձայն երաշխավորել վերահրատարակության:

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանի հեղինակած «Պոլիֆոնիա» (2012թ.) ուսումնական ձեռնարկի երկրորդ՝ փոփոխված և լրացված հրատարակության վերահրատարակման երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը, ա.գ.թ, դոցենտ Ա. Հարությունյանը և դոցենտ Մ. Բաղդասարյանը իրենց խոսքում նշեցին, որ այս ուսումնական ձեռնարկի I և II հրատարակությունները վաղուց կիրառվում են ուսումնական գործընթացում և համապատասխանում են մանկավարժական բուհի երաժշտական կրթություն բաժնի ծրագրային պահանջներին, որի հիմքով էլ ստեղծվել են: Քանի որ ուսանողները կրկին ունեն այդ ուսումնական ձեռնարկի կարիքը, որը վաղուց սպառվել է, ամբիոնը նպատակահարմար է գտնում «Պոլիֆոնիա» ուսումնական ձեռնարկի վերահրատարակումը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանի հեղինակած «Պոլիֆոնիա» ուսումնական ձեռնարկի երկրորդ՝ փոփոխված և լրացված հրատարակությունը միաձայն երաշխավորել վերահրատարակման:

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանի հեղինակած «Պոլիֆոնիա» (2009թ.) մեթոդական ձեռնարկի առաջին մասի՝ փոփոխումներով հրատարակման երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը, ա.գ.թ, դոցենտ Ա. Հարությունյանը և դոցենտ Մ. Բաղդասարյանը իրենց խոսքում նշեցին, որ այս մեթոդական ձեռնարկի I մասը, որը վաղուց կիրառվում է ուսումնական գործընթացում, ստեղծվել է երաժշտական կրթություն բաժնի բակալավրիատի ծրագրային պահանջներին համապատասխան: Սույն մեթոդական ձեռնարկում տեղ են գտել այն գործնական և ստեղծագործական աշխատանքների վերաբերյալ մեթոդական ցուցումներ և առաջադրանքներ, որոնք օգնում են բակալավրիատի ուսանողներին հնարավորինս լիարժեք տիրապետել «Պոլիֆոնիայի» դասընթացին: Առաջին հրատարակությունը, որը վաղուց սպառվել է, ամբիոնը նպատակահարմար է գտնում «Պոլիֆոնիա»՝ մեթոդական փոփոխված ձեռնարկի I մասի հրատարակումը՝ նախատեսված բակալավրիատի ուսանողների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանի հեղինակած «Պոլիֆոնիա» մեթոդական փոփոխված ձեռնարկի երկրորդ հրատարակությունը՝ նախատեսված բակալավրիատի ուսանողների համար, միաձայն երաշխավորել հրատարակման:

ԼՍԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանի հեղինակած «Պոլիֆոնիա» մեթոդական ձեռնարկի երկրերդ մասի հրատարակման երաշխավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչ Ս. Էլբակյանը, ա.գ.թ, դոցենտ Ա. Հարությունյանը և դոցենտ Մ. Բաղդասարյանը իրենց խոսքում նշեցին, որ այս մեթոդական ձեռնարկը ստեղծվել է երաժշտական կրթություն բաժնի մագիստրատուրայի «Երաժշտատեսական առարկաների տեսագործնական դասընթաց» առարկայի «Պոլիֆոնիա» ենթաբաժնի ստեղծագործական աշխատանքի ծրագրային պահանջներին համապատասխան: Սույն մեթոդական ձեռնարկում տեղ են գտել հայ և համաշխարհային պոլիֆոնիկ երաժշտության օրինակների հիման վրա այն ստեղծագործական աշխատանքների վերաբերյալ մեթոդական ցուցումներ և առաջադրանքներ, որոնք օգնում են մագիստրատուրայի սովորողներին հնարավորինս լիարժեք դրսևորել իրենց գիտելիքները ստեղծագործական աշխատանքներում:

ՈՐՈՇԵՑԻՆ – Երաժշտության մանկավարժության ամբիոնի դոցենտ, մ.գ.թ. Գոհար Մելիքսեթյանի հեղինակած «Պոլիֆոնիա» մեթոդական ձեռնարկի երկրորդ մասը՝ նախատեսված մագիստրատուրայի սովորողների համար, միաձայն երաշխավորել հրատարակման:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ս. ԷԼԲԱԿՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՍԻՄՈՆՅԱՆ